**Արձանագրություն N 6**
ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25 հոկտեմբերի 2017թ
ժամը 12:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա.Մաթևոսյանը
անդամներ՝ Ա. Բադալյանը, Ս. Բարխոյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

**Օրակարգ**

1. «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.09.2017թ. Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/39 բողոքի վերաբերյալ 18/10/2017թ. կայացրած որոշման քննարկում (որոշումը հրապարակվել է տեղեկագրում 23/10/2017թ-ին):

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի ժամանակացույցը հաստատելու մասին

**I. Գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2017/39 բողոքի վերաբերյալ 18/10/2017թ.-ին կայացրած որոշման քննարկման վերաբերյալ**

(Ա.Մաթևոսյան)

1. Գնահատող հանձնաժողովի նախագահը ներկայացրեց թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/39 բողոքի վերաբերյալ կայացրած որոշումը: Հանաձնաժողովը ուսումնասիրեց բողոքի վերաբերյալ կայացրած որոշումը և արձանագրեց, որ

ա/ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.09.2017թ.-ին խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել էր, որ Ընկերության հայտը մերժելով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»

բ/ «Գազկոմշին» ՍՊԸ-ն բողոքարկման խորհրդին խնդրել էր դադարեցնել ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման ընթացակարգի հանձնաժողովի 04/09/2017թ թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակատով «Գազկոմշին» ՍՊԸ-ին մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը 18/10/2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/39 բողոքի վերաբերյալ կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գնահատող հանձնաժողովը «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժելով գործել է իրավաչափ, կատարելով Կարգի 44-րդ կետով և ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով հրավերի 8.14 կետով սահմանված պահանջները:

2.1 Խորհուրդը քննելով ներկայացված բողոքը որոշում է կայացրել.

ա/ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29/09/2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

բ/ դադարեցնել գնահատող հանձնաժողովի 04/09/2017թ թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակատով «Գազկոմշին» ՍՊԸ-ին մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

3. Գնահատող հանձնաժողովը քննարկման արդյունքում հիմք ընդունելով թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/39 բողոքի վերաբերյալ խորհրդի կողմից կայացրած որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված պահանջները՝ «Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:» որոշեց.

ա/ դադարեցնել 04/09/2017թ թիվ 3 արձանագրության 3-րդ կետի «ա. ենթակետով «Արգոհշին» ՍՊԸ և «Վահրադյան Շին» ՍՊԸ կոնսորցիումին 1-ին տեղ զբաղեցնող ճանաչելու վերաբերյալ որոշումը: